ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N Ա-9.6.1/34
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

<<08>> փետրվար 2018 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Աուտիզմ ազգային հիմնադրամ»-ը, ի դեմս հիմնադրամի տնօրեն՝ Լ. Աթաջանյանի, (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով << կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի <<<< 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> N 1717-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), 09.06.01.«34. Աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովում» ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր), աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության, սոցիալական ադապտացիայի կազմակերպման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ 75 514 000 (յոթանասունհինգ միլիոն հինգ հարյուր տասնչորս հազար) << դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունը իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. սույն պայմանագրի 2.4.4. կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կազմակերպության կատարողական հաշվետվությունները,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարության ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը կտրամադրի համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1717-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ն ա խ ա ր ա ր ու թ յ ու ն	Կ ա զ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	«Աուտիզմ ազգային հիմնադրամ»
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,	Երևան, 0090 Գյուրջյան 13
Կառավարական տուն 2	"Արդշինբանկ" ՓԲԸ
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն	ՀԿՀՀ00877719
Հ/Հ 900011340164	Հ/Հ 2480126909340010
ՀԿՀՀ02512868	
Աշխատակազմի	Տնօրեն՝
ղեկավար՝ Ն. Հարությունյան	Լ. Աթաջանյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված
2018 թ. Դեկտեմբերի 8 -ին
կնքված N Ա-9613 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N N ը/կ	անվանումը	համառոտ բովանդակությունը	Իրականացվելիք միջոցառման կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը	պահանջվող գումարը(դրամ)
	«ԱՈՒՏԻԶՄ ԱՋԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»	1. Կիրառական Վարքային Վերլուծություն (ABA)	ԿՎՎ-ն աուտիզմ համախտանիշ և զարգացման ընդհանուր խանգարում ունեցող երեխաների ուսուցման մեթոդ է: Այն հիմնված է այն նախադրյալի վրա, որ համապատասխան վարքը՝ ներառյալ խոսքը, ակադեմիկան և կենսական հմտությունները կարող են ուսուցանվել՝ օգտագործելով գիտական սկզբունքները:	ABA թերապիայի ամենից տարածված ձևերից է DTT-ն : Յուրաքանչյուր հմտություն բաժանվում է ամենափոքր մասերի և անհատապես սովորոցվում է: Երեխան սկսում է փոքր հմտությունների յուրացումից և աստիճանաբար սկսում է սովորել ավելի բարդ հմտություններ, քանի որ յուրաքանչյուր նախորդ փոքրիկ հմտությունը հաջորդի հիմքն է հանդիսանում:		75մլն.514
	ԱՈՒՏԻԶՄ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՅԼ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ	2.Երեխաների ներառումը հանրակրթական համակարգ	2. Ներառման ծրագրի հիմքում ընկած են այն կենսական նպատակների իրականացումը, որոնք հնարավորություն կտան հաղթահարելու զարգացման յուրատիպությունից ի հայտ եկած դժվարությունները՝ հաղորդակցման և շփման	2. Ներառական դպրոցում յուրաքանչյուր երեխայի համար իրականացվում է տվյալների հավաքագրում և արդյունքների շարաթական ամփոփում, որն էլ հնարավորություն է տալիս արձանագրել յուրաքանչյուր երեխայի առաջընթացը, մշակել անհատական զարգացման և խմբային ինտեգրման արդյունավետ ծրագրեր:		

			հմտություններ, ընկերական ջերմ կապերի ստեղծում, հասարակական նորմերի յուրացում, զբաղվածություն, նոր հետաքրքրություններ ի, ակադեմիական գիտելիքների ձեռքբերում:			
		3. խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման և շփման ունակությունների զարգացում	3. Աուտիզմ ախտորոշում ունեցող անձինք ունեն տարաբնույթ խոսքային խանգարումներ: Կենտրոնում խոսքային թերապիան իրականացվում է երեխայի վաղ տարիքից, որով պայմանավորված է աշխատանքի առավել արդյունավետությունը:	3. Կենտրոնում իրականացվող խոսքային թերապիան ուղղված է երեխաների հաղորդակցման հմտությունների զարգացմանը և իր մեջ ներառում է՝ • խոսքի ըմբռնում/ընկալում, • հնչյունի արտաբերում, • արտահայտչականություն, • խոսքի սոցիալական կիրառում, • ոչ խոսքային հաղորդակցություն (ժեստային հաղորդակցություն, PECS համակարգ): **<u>Երեխաները գնահատվում եմ VB-MAPP -ով</u>**		
		4. Պատկերների Փոխանակման Հաղորդակցման համակարգ PECS	4. Հաղորդակցումը մի հմտություն է, որը մեզանից շատերի համար ոչ մի դժվարություն չի ներկայացնում, այնինչ աուտիզմ համաշխատանիշ ունեցող երեխաների համար այն կարող է չափազանց բարդ ու ֆրուստրացնող լինել: Չկարողանալով հաղորդակցվել խոսքի միջոցով՝ երեխան, այնուամենայնիվ, փորձում է ինչ-որ կերպ հասկացնել իր ցանկությունների մասին՝ հայացքն է ուղղում դեպի այդ առարկան,	4. PECS-ը նպատակաուղղված է երեխաների ֆունկցիոնալ հաղորդակցման հմտությունների ձևավորմանը՝ շեշտը դնելով ինքնաբուխ խոսքի վրա: PECS-ի համակարգային կիրառումը տանը, դպրոցում հնարավորություն կտա ձևավորել զարգացման խանգարումներ ունեցող երեխաների խոսքը:		

			մատնացույց անում կամ ուղորդում դեպի այն: PECS-ը հաղորդակցման այլընտրանքային համակարգ է, որտեղ երեխան սովորում է հաղորդակցվել մեծահասակների հետ՝ նրան այս կամ այն պատկերը ունեցող քարտը տալով: PECS-ը հիմնված է այն գաղափարի վրա, որ երեխան, որը չի կարողանում ոչ խոսել և ոչ էլ գրել, կարող է սովորել հաղորդակցվել նկարների միջոցով:			
		5. Երաժշտական թերապիա	5. Կենտրոնում լայնորեն կիրառվում է երաշժտաթերապիա: Երաժշտությունը հնարավորություն է տալիս առիթիզմով երեխաներին ինքնաարտահայտվել, քանի որ այն հաղորդակցման ոչ խոսքային ձև է: Հաճելի երաժշտական ստեղծագործություն ների հնչողության ժամանակ դրական հուզական ապրումներն ուժեղացնում են ուշադրությունը, խթանում կենտրոնական նյարդային համակարգը:	5. Երաժշտական թերապիայի կիրառումն ունի հետևյալ նպատակները՝ • խթանում է շարժողական ֆունկցիաները, • շտկում և զարգացնում է զգայական ֆունկցիաներն ու հնարավորությունները, • խթանում է խոսքային ֆունկցիան, • կարգավորում է խոսքի տեմպը, ռիթմը, շեշտադրությունը, տեմբրը, արտահայտչականությունը: Երաժշտական թերապիան իր մեջ ներառում է • երաժշտական ստեղծագործություններ ի ունկնդրում, • ծանոթացում երաժշտական գործիքներին, • տարբեր երաժշտական գործիքների տիրապետում, • երգեցողություն, • երաժշտության ներքո ռիթմիկ շարժումների կատարում,		

				• երաժշտության զուգակցում կատարվող աշխատանքի հետ:		
		6. Արտթերապիա	6. Արվեստի թերապիայի նպատակներն են օգնել աուտիզմով մարդկանց սոցիալապես զարգանալ: Օգնելով աուտիզմով երեխաներին զարգանալ այս բնագավառներում՝ հետևում է հուսադրող արդյունք, որը կօգնի նվազեցնել երեխայի անհանգստությունը և թույլ տալ նրան շփվել հասարակության հետ ու ինքնաարտահայտվել: Քանի որ աուտիզմով երեխաները շատ հաճախ բարդություններ են ունենում լեզվի զարգացման հետ կապված, արվեստը նրանց համար ինքնաարտահայտվելու հիանալի ձև է:	6. Արվեստի թերապիան նաև խթանում է դրական սոցիալ հարաբերությանը թերապևտի և աուտիզմով մարդկանց միջև: Սկզբնական սեսիաները ներառում են ընտանեկան կոնսուլտացիա, դիտարկում, գնահատում, միջամտության նպատակների հաստատում և վստահություն:		
		7. Օկուպացիոն թերապիա (էրգոթերապիա) Ինքնասպասարկման, ինքնակառավարման և պատշաճ միջանձնային հարբերություններ հաստատելու հմտությունների ձևավորում և զարգացում	7. Օկուպացիոն թերապիան թերապևտիկ միջամտություն է, որը բացահայտելով երեխայի ունակություններն ու հնարավորությունները՝ ներգրավում է, մասնակից է դրաձնում նրան այնպիսի գործողությունների մեջ, որոնք հնարավորինս կնպաստեն երեխայի կյանքի որակի բարելավմանը՝	7. Օկուպացիոն թերապիայի հիմնական նպատակն է սովորոցնել երեխաներին ինքնուրույն կենցաղավարության, հնարավորինս ինքնուրույն ներգրավվելու այնպիսի գործողությունների մեջ, որոնք կարևոր են տվյալ երեխայի համար և իմաստ են հաղորդում նրա կյանքին: Կենտրոնում Օկուպացիոն թերապիան ներառում է աշխատանք մի քանի ոլորտներում. 1. Զգայական ինտեգրում 2. Զբաղվածություններ		

			անդրադառնալով կյանքի այնպիսի ոլորտներին, ինչպիսիք են ինքանխնամքը, խաղը, հանգստի կազմակերպումը, սոցիալ-հասարակական կյանքին մասնակցությունը:	Կենցաղային հմտությունների ձեռքբերում • Ինքանխնամք • Գնումներ խանութից • Ուտեստների պատրաստում Ժամանց • Պար • Ռիթմիկա Աշխատանքային հմտությունների ձեռքբերում • Ձեռքի աշխատանք 3. Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա և ՕԹ		
		8. Սոցիալականացման ծրագիր	8. Ծրագրի շրջանակներում իրականացվում է սոցիալ-հոգեբանական աշխատանք աուտիզմով երեխաների հետ, որի նպատակն է նրանց սոցիալականացումն ու ինտեգրումը հասարակության մեջ: Ինչպես նաև ծրագրի գերնպատակն է նպաստել երեխաների ինքնուրույնության զարգազմանն ու հասարակության մեջ ինքնադրսևորմանը:	8. Կենտրոնում սոցիալականացման ծրագիրը ներառում է աշխատանք մի քանի ոլորտներում. • Աշխատանք ընտանիքի հետ • Ինտեգրում հասարակության մեջ Արդյունքում՝ կատարված աշխատանքների շնորհիվ երեխաները ընդգրկվել են յոգայի պարապմունքներում, թատերական խմբակում, մարզադահլիճում անցկացվող պարապմունքներում և այլ ընթացիկ ծրագրերում: Այս ամենի շնորհիվ ձեռք են բերվել գիտելիքներ և կարողություններ, որոնք օգնում են նրանց առավելագույնս ինքնուրույն հարմարվել և ինքնադրսևորվել հասարակության մեջ: Ի վերջո, ծրագիրը հնարանավորություն է տալիս երեխաներին օգտվելու հասարակության մեջ լիարժեք ապրելու իրենց իրավունքից:		

Ընդամենը

«Աուտիզմ ազգային հիմնադրամի» ծրագրի նպատակն է աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների բուժման, կրթության և զբաղվածության ապահովումը: Հիմնական մեթոդը, որը կիրառվում է, Կիրառական վարքային վերլուծությունն է (ԿՎՎ/ ABA), որը հնարավորություն է տալիս մշակել համապատասխան ծրագրեր՝ հիմնվելով երեխայի վարքի, մտավոր ունակությունների և հմտությունների

մանրակրկիտ հետազոտման վրա: Բոլոր վերոնշյալ ակնկալվող արդյունքները գնահատվում են ԿՎՎ-ում առկա գնահատման համապատասխան չափորոշիչներով:

Հայաստանում պետական ֆինանսավորումը հնարավորություն տվեց «Աուտիզմ ազգային հիմնադրամին » իր ծրագրի շրջանակում 2014 թվականին հիմնել « Իմ ուղին » ուսումնավերականգնողական կենտրոնը , որտեղ այժմ 116–երեխաներ արդի չափանիշներին համապատասխան վերանորոգված շենքային պայմաններում, ժամանակակից կրթական տեխնոլոգիաներով, սիրո և հոգատարության միջավայրում ստանում են թերապևտիկ շտկողական ծառայություններ, այն է՝

- ԿՎՎ-ծառայություններ (Վարքային թերապիա)
- Խոսքային թերապիա
- Օկուպացիոն թերապիա (Էրգոթերապիա)
- Արտթերապիա
- Ավազաթերապիա
- Երաժշտական թերապիա
- Պարային թերապիա
- Ադապտիվ ֆիզ. դաստիարակություն (ԱՖԴ)(նոր համալրված երկու սպորտային դահլիճներում)
- Հոգեբանական աջակցություն
- Դպրոցում իրականացվող ծառայություններ
- Սոցիալական ծրագրեր
- Զբաղվածության ծրագրեր (կավագործություն, կար և գորգագործություն)
- Տնային ծառայություններ

Աուտիզմի հիմնախնդիրներին հասարակության ուշադրությունը հրավիրելու նպատակով 2012-2017 թվ-ին իրականացվեցին մամուլի և գիտահանրամատչելի հեռուստառադիոհաղորդումների միջոցով իրազեկման աշխատանքներ: Յուրաքանչյուր տարի ապրիլի 2-ին կազմակերպվում են իրազեկմանը ուղղված երթեր և միջոցառումներ:

2013-2017 թվականներին իրականացվեցին հատուկ մանկավարժների, հոգեբանների և վարքային թերապիստների վերապատրաստումներ և սեմինարներ:

Այս տարիների ընթացքում կենտրոն հաճախող երեխաների ծնողների համար իրականացվում է նաև հատուկ նախատեսված ինտենսիվ վերապատրաստումներ:

Ընդհանուր ծրագրում ընդգրկված են 180 աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող 1.3 - 22 տարեկան երեխաներ և դեռահասներ:

Կրթության և գիտության նախարարության աջակցության շնորհիվ 2013 թվականից ծրագիրը իրականացվել է 50 երեխայի հետ: 2014 թվականից ծրագրում ընդգրկվել են 55 երեխա: 2014 թվականի սեպտեմբեր ամսից մինչ այժմ ծրագիրը իրականացվում է տարեկան 65 երեխայի հետ:

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ կրթության և գիտության
նախարարություն
Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005619
ՀՎՀՀ 02512868

Աշխատակազմի
ղեկավար Լ. Հարությունյան

_____ (ստորագրություն)

Կ.Տ

Կ ա տ ա ր ո ղ
«Աուտիզմ ազգային հիմնադրամ»
Երևան, 0090 Գյուրջյան 13
Առեկսիմբանկ
ՀՎՀՀ00877719
Հ/Հ 2380026909370100

Տնօրեն
Լ. Աթաջանյան

_____ (ստորագրություն)

Կ.Տ